ՅՈՒՐԻ ԼԵՎՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայաստանյան և միջազգային գիտակրթական ասպարեզների ականավոր գիտնական և կրթական գործի կազմակերպիչ, ՀԱՊՀ երկարամյա ղեկավար, մանկավարժ և ՀԱՊՀ պատվավոր պրոֆեսոր Յուրի Լևոնի Սարգսյանի 80-ամյակը:

Յուրի Սարգսյանը ծնվել է 1941 թ. փետրվարի 9-ին Երևանում մտավորականի ընտանիքում: 1962 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետը: 1964 թ. ընդունվել է Մոսկվայի քիմիական մեքենաշինության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Մեխանիզմների, մեքենաների և ավտոմատ գծերի տեսություն» մասնագիտությամբ: 1967 թ. Մոսկվայի մեքենագիտության ինստիտուտում ժամկետից մեկ տարի շուտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 1975 թ.՝ դոկտորական ատենախոսությունը, երկու տարի անց ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1971-72 թթ. գիտական փորձառություն է ձեռք բերել Ստենֆորդի համալսարանում, 1977-78 թթ. աշխատել է Ստենֆորդի և Իլլինոյսի համալսարաններում որպես հրավիրված պրոֆեսոր:

Վերընթաց է եղել Յու. Սարգսյանի աշխատանքային ուղին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում. ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, 1988-ից՝ ԵրՊԻ-ի (հետագայում՝ ՀՊՃՀ, այժմ՝ ՀԱՊՀ) ռեկտոր մինչև 2006 թվականը:

Հայաստանում բարձրագույն կրթության կառուցվածքային-ծրագրային արմատական ռեֆորմը, որ նպատակաուղղված էր հայաստանյան բարձրագույն կրթության համակարգի մերձեցմանը միջազգային չափանիշներին, առաջին անգամ իրականացավ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, որի նախաձեռնողն ու գաղափարախոսը դարձավ ռեկտոր Յուրի Սարգսյանը: Նրա անմիջական ղեկավարությամբ Պոլիտեխնիկականը 1992 թ. վերակազմավորվեց Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի՝ ԱՊՀ երկրների տարածքում առաջինն անցնելով Բոլոնիայի գործընթացով ամրագրված եռաստիճան կրթական համակարգին: Յու. Սարգսյանի կողմից ստեղծված բուհի Գլխավոր պլանն այն իրավական-ծրագրային հիմքն էր, որով նախատեսվում էին պոլիտեխնիկական կրթության բարեփոխումները՝ շուկայական տնտեսությանն անցման շրջանում նորագույն փոփոխություններին հարմարունակ դարձնելու համար: 1995 թ. ՀՀ կառավարությունը հատուկ որոշմամբ

հավանություն տվեց ավարտված գիտափորձին, իսկ բարձրագույն կրթության երկաստիճան մոդելը, ամրագրվելով օրենսդրորեն, ներդրվեց Հայաստանի բուհերում: Գիտափորձն իր արտացոլումը գտավ նաև ինժեներական կրթության մեթոդաբանության, բարձրագույն կրթության ստրատեգիական պլանավորման, Բոլոնիայի գործընթացի տարբեր հայեցակարգերի վերաբերյալ Յու. Սարգսյանի հեղինակած մի շարք աշխատություններում: Կրթական ասպարեզի գործիչը էական ներդրում ունեցավ նաև Հայաստանի Ամերիկյան և Արցախի պետական համալսարանների կազմավորման գործում:

Բազմաբեղուն է Սարգսյան-գիտնականի ստեղծագործական գործունեությունը: Ընդհանրացնելով մեխանիզմների սինթեզի դասական երկրաչափական ուղղությունը (Բուրմեստր-Շնոֆլիսի տեսություն) շարժման մոտավոր վերարտադրության դեպքի համար, Յու. Սարգսյանը հիմնել է մեխանիզմների սինթեզի տեսության սկզբունքորեն նոր ուղղություն՝ ապրոքսիմացիոն կինեմատիկական երկրաչափություն: Տեսությունը լայն ընդունելություն է գտել միջազգային գիտական շրջանակներում, իսկ համապատասխան տերմինն ընդգրկվել է մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային տերմինաբանական ստանդարտում: Այս ուղղության տեսական հիմունքները շարադրված են հեղինակի “Аппроксимационный синтез механизмов” (М.: Наука, 1982) մենագրության մեջ, իսկ տեսական նոր ապարատի հիմքով ստեղծված մեխանիզմների ապրոքսիմացիոն սինթեզի մեթոդաբանությունը և համապիտանի ալգորիթմական մեթոդները՝ “Кинематика, динамика и точность механизмов” (М.: Машиностроение, 1984) գրքում: Դրանք ընդգրկված էին մեխանիզմների և մեքենաների տեսության թեկնածուական մինիմումի պարտադիր գրականության միութենական ցանկում: Նրա հարյուրավոր գիտական աշխատությունները, միջազգային լայն ճանաչում ստացած մենագրությունները, գյուտերն ու պատենտները նվիրված են մեխանիզմների սինթեզի տեսությանը և ավտոմատացված նախագծմանը, տարածական մեխանիզմների տեսությանը, ռոբոտատեխնիկական համակարգերի մեխանիկային, մեխանիզմների, ռոբոտների, ավտոմատացված համալիրների նոր տիպերի ստեղծմանը: Մեխանիզմների տեսության բնագավառում հիմնախնդրի կարևորության ու նաև միջազգային ճանաչման մասին է վկայում այն իրողությունը, որ մեխանիզմների և մեքենաների տեսության համաշխարհային 7-րդ համաժողովի (Պրահա, 1991) հինգ պլենար նիստերից մեկում որպես հիմնական զեկուցող Յու. Սարգսյանը ներկայացրել է տարածական մեխանիզմների կինեմատիկական սինթեզի ապրոքսիմացիոն խնդիրների վերլուծությունը:

Մեխանիզմների սինթեզում վերջավոր չեբիշևյան մոտարկումների կիրառության ասպարեզում ձեռք բերած տեսական ակնառու արդյունքների համար Յու. Սարգսյանն Ամերիկյան ինժեներ-մեխանիկների ընկերության կողմից արժանացել է լավագույն աշխատանքի համար սահմանված մրցանակին, ինչպես նաև «Պրոկտոր և Գեմբլ» ընկերության հատուկ մրցանակին: 1991 թվից նա մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային ֆեդերացիայի (IFToMM) գործադիր կոմիտեի անդամ է: 1995 թ. Յու. Սարգսյանին շնորհվել է IFToMM-ի հատուկ մրցանակը՝ մեխանիզմների և մեքենաների տեսության ասպարեզում ակնառու ծառայությունների համար: Նա հեղինակ-

ներից մեկն է այդ բնագավառի միջազգային տերմինաբանական ստանդարտի, որի հիման վրա նրա համահեղինակությամբ լույս է տեսել «Մեխանիզմների և մեքենաների տեսության անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարանը», ստեղծվել է դրա էլեկտրոնային տարբերակը (Ե., 2009)։

Մեխանիզմների տեսության բնագավառում նրա ղեկավարությամբ իրականացված աշխատանքները պարգևների են արժանացել տարբեր մրցույթներում և ցուցահանդեսներում, կիրառվել են հատուկ նշանակության կառավարման համակարգերի (Ալտաիր ԳՀԻ), խողովակների սառը գլոցման հաստոնների (Գլազովի, Ալմա Աթայի, Չեպելի մեքենաշինական գործարաններ), կիսահաղորդչային սարքերի արտադրության ավտոմատացման միջոցների (Երևանի կիսահաղորդչային տեխնիկայի հատուկ նախագծակոնստրուկտորական բյուրո) և այլ սարքերի ստեղծման ընթացքում։

Յու.Սարգսյանը 1986թ. գիտական ծանակշիռ վաստակի համար ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1996թ.՝ իսկական անդամ։ 1989-2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, 1994թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ փոխնախագահ։ Երկար տարիներ եղել է ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի անդամ է, ղեկավարել է տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ասպարեզում ՀՀ նախագահի մրցանակի շնորհման հանձնաժողովը։

Պետք է առանձնահատուկ ընդգծել նրա դերը Մեխանիզմների և մեքենաների տեսության (այժմ՝ Մեխանիկայի և մեքենագիտության) ամբիոնի և նույնանուն դասընթացի գիտամեթոդական զարգացման և նորարարական վերակառուցման ու արդիականացման ասպարեզում ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային համատեքստում, մասնավորապես, առարկայի գիտամեթոդական բովանդակության նորացման և նորարարական վերակառուցման առումներով։ Լինելով IFToMM-ի Գործադիր կոմիտեի անդամ և ՄՄՏ տերմինաբանական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, Յու.Սարգսյանը՝ որպես հրավիրված բանախոս, մասնակցել է IFToMM-ի բոլոր միջազգային համաժողովներին և այլ միջոցառումների՝ էապես նպաստելով ՄՄ տեսության բովանդակային նորացմանը, արդիականացմանը, միջազգային հեղինակության բարձրացմանը և նրա վերածվելուն ժամանակակից ճարտարագիտական կրթության, մասնավորապես, միջդիսցիպլինար բնույթի հիբրիդային կրթական ծրագրերի (մեխատրոնիկա, ռոբոտատեխնիկա և այլն) կարևոր կառուցամասի։ Յու.Սարգսյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ վերջին տարիներին մեխանիկական մասնագիտությունների ասպիրանտների և այլ հետազոտողների համար ստեղծվել են «Մանիպուլյացիոն մեխանիզմներ» ինքնատիպ դասընթացը և նույնանուն դասագիրքը (Ե., 20), լույս է տեսել ՄՄՏ եռալեզու առցանց տերմինաբանական բառարանը, մշակվել և իր կողմից դասավանդվում է «Ճարտարագիտական կրթության մեթոդաբանություն» նոր դասընթացը՝ նախանշված մասնագիտական/ հետազոտական կոմպենտենցիաներով օժտված մասնագետների՝ ՀԱՊՀ ասպիրանտների ձևավորմանը։

Յու. Սարգսյանի հետռեկտորական գործունեության շրջանում է հիմնվել Ռոբոտատեխնիկայի բազային գիտահետազոտական լաբորատորիան, որտեղ նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք արդիական դրամաշնորհային նախագծեր՝

ռոբոտ-մանիպուլյատորների մեխանիկայի և վերականգնողական ռոբոտատեխնիկայի տեսական հիմունքների զարգացման և բազմաբնույթ գործնական կիրառությունների նախապատրաստման ուղղությամբ: Դրանց արդյունքները հրապարակվել են ՄՄՏ հեղինակավոր գիտական պարբերականներում, IFToMM-ի հովանավորությամբ հրապարակվող աշխատությունների ժողովածուներում և կոլեկտիվ մենագրություններում, իսկ գործնական մշակումներն արժանացել են գյուտերի և պատենտների ՀՀ և միջազգային բազմաթիվ վկայականների:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում մեխանիզմների և մեքենաների տեսության ասպարեզում Յուրի Սարգսյանի ձևավորած գիտական դպրոցում այսօր էլ շարունակվում են հետազոտական աշխատանքները. նրա անմիջական ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական աշխատանքներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Ղազախստանում և այլուր: 1995 թվից ՀԱՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող «Մեքենաշինություն և մեքենագիտություն» 034 մասնագիտական խորհրդի նախագահն է և Ռոբոտոտեխնիկայի հետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարը: Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի քանի գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ է, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի, Տեխնիկական գիտությունների սերիայի, «ՀԱՊՀ Բանբեր» հանդեսի գլխավոր խմբագիրը:

Արտերկրում ճանաչված գիտակրթական ասպարեզի վաստակաշատ գործիչն արժանացել է Հայ կրթական հաստատության (ԱՄՆ) «Տարվա լավագույն կրթական գործիչ» մրցանակին (2002), ընդգրկվել է Միջազգային կենսագրական կենտրոնի (Քեմբրիջ, Անգլիա) «Ականավոր 100 կրթական գործիչներ» անվանակարգում (2006), արժանացել «21-րդ դարի 200 ինտելեկտուալներ» դիպլոմի (Միջազգային կենսագրական կենտրոն, Քեմբրիջ, 2007):

Հայաստանի Հանրապետության հասարակական և պետական ասպարեզներում մատուցած ծառայությունների համար (եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Սահմանադրական հանձնաժողովի անդամ և այլն) Յուրի Սարգսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1985), «Անանիա Շիրակացի» մեդալով (1999), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2003): 2011-ին նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Շուրջ 65 տարի է՝ Յուրի Սարգսյանն ամուր թելերով կապված է իր մայր բուհին, ապրել է նրա հոգսերով, արարել նրա շենացման համար՝ իմաստնանալով նրա երթին համընթաց: Եվ այսօր էլ նա լի է ստեղծագործական ավյունով, պատրաստակամ՝ իր հարուստ փորձով ու իմաստությամբ սատար լինելու հարազատ կրթօջախի առաջընթացին:

ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի տեխնիկական գիտությունների սերիայի խմբագրական խորհուրդը սիրով շնորհավորում է ակադեմիկոս Յուրի Սարգսյանին ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, խաղաղ երկինք՝ մեր ժողովրդի հետ միասին այս դժվարին ժամանակներում: